Նախագահ
Ռասսել Մ.
Նելսոն

Աստծո մեծ ՊԱՐԳԵՎԸ

«Վերջերս ես և Քույր Նելսոնը զմայլվում էինք վիոքր ակվարիումում լողացող տրոպիկական ձկների գեղեցկությամբ: Վառ գույներով, տարբեր նախշերով և չափսերի ձկներն այս ու այն կողմ էին լողում: Ես հարցրեցի այնտեղ գտնվող աշխատողին. «Ո՞վ է կերակրում այս գեղեցիկ ձկներին»:

Նա ասաց. «Ես»:

Ապա ես հարցրեցի. «Նրանք երբևէ շնորհակալություն հայտնե՞լ են ձեզ»:

Նա պատասխանեց. «Դեռ ոչ»:

Որոշ մարդիկ այդ ձկների նման են: Նրանք տեղյակ չեն Աստծուց և իրենց հանդեպ ունեցած Նրա մեծահոգությունից: Որքան ավելի լավ կլիներ, եթե մենք կարողանայինք ավելի լավ ճանաչել Աստծո սերը և երախտագիտություն հայտնեինք Նրան:

Շնորհակալ լինել Հիսուս Քրիստոսի համար:

Աստված ուղարկեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որ օգնի մեզ: Նա արեց այդ, որովհետև սիրում է մեզ:

Հիսուսը եկավ **փրկագնելու** մեզ:

Նրա **Քավության** շնորհիվ մենք հարություն կառնենք մահից հետո:

Նրա Քավության շնորհիվ մենք կվերադառնանք հավիտյան ապրելու մեր Երկնային Հոր հետ:

Հիսուսը բացատրել է.

«Ես եմ հարությունը և կյանքը. ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի: Եվ ամեն ով որ կենդանի է և ինձ հավատում է, հավիտեան չի մեռնիլ» (Հովհաննես 11.25–26):

Սա է Զատիկի հրաշալի ուղերձը: ●

փրկագնել.
վճարել մեր մեղքերի համար, որպեսզի մենք կարողանանք վերադառնալ Աստծո մոտ:

Քավություն.
երբ Հիսուսը տառապեց մեր մեղքերի համար Գեթսեմանի պարտեզում և մահացավ խաչի վրա Գողգոթայում:

«Շնորհակալություն Աստծուն» ելույթից,
Լիահոնա, *մայիս 2012, 77–80:*